



ԲԱՐՁՐԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ. ԹԻՒ 16.

1850

ՕԳՈՍՏՈՍԻ 15.

ԲԱՐՁՐԱԿԱՆ

ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Խառիստ ճարտարախոսին բարոյական խրառները¹:

Ե՞ս փափաքիր անցնիլ հեռու
Երկիրներ երթալ, չե՞ս ուզեր ելլել
Վնտուել այնպիսիները որ կարենանքե-
զի հարկաւոր եղած կրթութիւնն ու
գիտութիւնները սորվեցընել։ Ուէ որ
չե՞ն տարակուսիր չե՞ն քաշուիր արհես-
տաւորք ու վաճառականք այնչափ ահա-
զին ծովերու անծայր սահմանները
կտրել իրենց հարստութիւն գանձելու
համար, չե՞ն ամաչեր ան պատանի երի-
տասարդ կտրիծները որ աւելի զիտուն,
աւելի կարող և կիրթ ըլլալու համար
կը դանդաղին քիչ մը տեղ ճամբայ ը-
նելու։

Հարժմունքդ ամէն ժամանակ հա-

¹ Խոսկրատ Աթենացի երեւլի ճարտարախոսը
Քրիստոսէ 436 տարի առաջ ծնած է։

մեստ ըլլայ և կարգաւորեալ, խօսքերդ
քաղցը և քաղաքավար։ Դիմացինդ բա-
րեւելու ատեն նայէ որ ազնուական և
պարկեցտ կերպ մը ցուցընես, և անոնց
վերաբերեալ խօսակցութիւնը քաղա-
քավարութեամբ մէջ բերես։ Երբոր
այսպէս ամենուն հետ ըստ պատշաճի
վարուիս և չար ընկերներէ հեռու կե-
նաս, ամէն աղէկ մարդկանց սիրտը քեզի
կը քաշես։ Ոչ շատ անգամ և ոչ երկայն
բարակ նոյն մէկ նիւթի վրայ մի և նոյն
մարդուն հետ մի խօսիր։ Վասն զի փոր-
ձուած բան է որ միշտ ամէն բանի շա-
փազանցը ձանձրութիւն կը պատճառէ։
Դայէ որ ինք զինքդ աշխատութեան
վարժեցընես՝ թեպէտ և կարօտութի
ալ չունենաս, որպէս զի երբ հարկ ըլլայ

ուրիշի օգնելու՝ դժուարութիւն չկրես
ու մէկէն համիս : Օ գոյշ կեցիր այն-
պիսի գործքերէն որ մարդով վատանուն
կ'ընեն , ինչպէս ազահութենէ , բար-
կութենէ և փափկութենէ : Վէելի պի-
տի ընտրէ մարդ պատիւն աճեցրնել
քան հարստութիւնը : Անձէ միշտ
բարկութիւնդ . սովորութիւնը զքեզ
դիապուածով պատիկ ձգողին հետ այն-
պէս վարուիլ , ինչպէս որ դուն կ'ուզես
որ այնպիսի միջոց քեզի հետ վարուին :
Չնքն ու անցաւոր հաճոյից տեղիք մի
տար քու մտքիդ մէջ . ինչ ամօթ բան է
որ ծառաներուն հրամայողը ինքը իրեն
հաճոյից ծառան ըլլայ :

Ինչպէս սրբազն աւանդ մը նայէ
որ ուրիշ գաղտնիքը պահէս . պէտք
է մարդ այնպիսի ազնուական կեանք
վարէ որ ուրիշներն իրեն գաղտնիք մը
բանալու ժամանակ ամեննեին վրան
շտարակուսին , ապահովութեան հա-
մար երդմունք ընել տալ հարկ չհա-
մարին : Ձնէ որ անպիտան մարդկանց
վրայ անվատահ ըլլալը պատշաճ կը սե-
պէնք , մէկաւ կողմաննէ ալ պէտք է ա-
ռաքինի մարդկանց վրայ ալ վստա-
հութիւն ունենանք . ուստի որչափ որ
կարելի է զգուշանալու է ուրիշ գաղ-
տնիք յայտնելէն : Ձնէ որ երդմունք ու-
զեն քեզմէ , միայն աս երկու դիապուած-
ներուս մէջ կրնաս երդուըննալ . մէյմը
երբոր հարկ ըլլայ մեծ ու սուտ զրաբ-
ութենէ մը ինքզինքդ ազատել . եր-
կրորդ՝ զբարեկամներդ վտանգէ փրկե-
լու համար : Ձնէ որ կ'ուզես որ վրադ
ստերդումի և ազահի կասկած չունե-
նան , ամեննեին շահու համար մի երդ-
ւըննար : Ո՞էկու մը հետ գեւ բարե-
կամնեան սիրայ կապովը չմիացած ,
առաջ աղէկ մը քննէ : Ձէ անիկայ իրեն
բարեկամներուն հետ ինչպէս վարուեր
է , ու ամեննեին մի տարակուսիր որ քե-
զի հետ ալ նոյնպէս պիտի վարուի :
Վրէական յանցանք սեպէ բարեկամն-
թեան սիրոյն գէմ գործելն . բայց Ձէ
որ դիապուածով աւրուեցար բարեկամիդ
հետ , նայէ որ շուտ մը սիրու առնես .
ըլլայ որ ինքն ալ քեզմէ հեռանայ , և

գիտնաս որ քիչ ամօթ չէ բարեկամաց
հետ աւրուիլը , և երբեմն կ'ըլլայ որ
մարդ անզգուշութեամբ չնցին բանի մը
համար քիչ ժամանակի մէջ ամենէն ալ
կը զրկուի : Բարեկամները փորձով կը
հնանցուին , բայց պիտի նայուի որ ըրած
փորձգ վտանգ մը չըերէ դիմուգ . օրինա-
կի համար , կեղծէ թէ կարօտութիւն
ունիս , գուցէ իրաւցընէ ալ ունենաս .
նայէ այնպիսի գաղտնիքներ վտահա-
նաս իրենց , որ եթէ յայտնուին՝ քեզի
քիչ կամ ամեննեին վնաս չըերեն . երբ-
որ տեսար որ յոյսդ պարապ հանեցին՝
ալ ամեննեին քովդ մի հանդիպըններ .
խկ թէ որ պատրաստ ցուցըննեն քեզի
ձեռքերնէն եկած ծառայութիւնն ընե-
լու՝ վտահ եղիր այն ժամանակ իրենց
հաւատարմութելը վրայ : Այնաս աւելի
համննալ զբարեկամներդ քու դժբաղ-
գութեանդ և վտանգներուգ մէջ . նայէ,
թէ իրենք ան ատենը ինչ ջուրի վրա
են . վասն զի այնպիսի միջոց բարեկամաց
հաւատարմութիւնը ինչպէս ոսկին կրակին
մէջ այնպիս կը փորձուի : Բարեկամաց
հետ քաղաքավարութեամբ վարուելու
համար սկզբ չէ սպասել որ անսնք միշտ
քեզի գան , այլ երբոր առիթ կ'ըլլայ
յօժարակամ վազէ գուն ալ անսնց օգ-
նելու . զիտնաս որ եթէ մեծ նախա-
տինք է անիրաւութեանց մէջ թշնա-
միներէն յաղթուին՝ ոչ ինչ պակաս ա-
մրցնալու արժանի բան է թողուն որ
բարեկամք բարերարելու մէջ քան զքեզ
առաւելուն : Ձարգէ միշտ ու պատուէ
զձմարիտ բարեկամներդ , չեմ ըսեր
այնպիսիներն որ դժբաղզութեանդ ա-
տեն կու զան ցաւակից կ'ըլլան . այլ
զանսնք որ չեն նախանձիր ամեննեին ,
չեն ատեր զքեզ ունեցած յաջողու-
թեանցդ պատճառաւ . աշխարհքին
մէջ քանիներ կան որ բարեկամներու
ձախորդութեանց կարեկից կ'ըլլան ,
բայց չեն կրնար տանիլ Ձէ որ յանկարծ
բարեբաղզութիւն մը պատահէլու ըլ-
լայ : Պէտք չէ ամեննեին բարեկամացդ
առջեւ զանց ընել յիշատակելու ան մէկ
բարեկամդ որ դիապուածով հեռու տեղ
զտնուած ըլլայ , պափէս զի լուզներն

վատահ ըլլան վրադ որ իրենց յիշատակն ալ թէ մօտ եղած ըլլան և թէ չեռու՝ նոյնպէս մօքիդ մէջ անջինջ կը մնայ :

Այէ որ հագած զգեստիդ վրայ պար կեշութիւն մը երենայ և ոչ չնչին զարդարանկներ, վասն զի մէկը ազնուական մոտաց նշան է, իսկ մէկան ախտաւ որ մոլի ըլլալուն : Ալոկին յարդը ձանչ ցիր . չեմ ըսեր թէ չափէ դուրս ստակ դիզէ, այլ ունեցածդ վաստըկածդ՝ կարգով խոհեմութեամբ գործածէ, մի նմանիր անոնց որ միայն վաստըկիլ գիտեն, իսկ ծախել ամենեն նայ : աս տեսակ ձարափիկներն ան մարդուն կը նմանին, որ աշխոյժ ծիեր գներ է՝ բայց անոնց վրայ հեծնալու կարողութիւն չունի : Ացէկ զիտցիր որ մարդու հարստութիւն տրուեր է որպէս զի վայելէ և օգտի . ստակլ առնել փողոցը նետեն կարծեմ՝ վայելել չըսուիր, ուրեմն նայէ որ այնպէս վայելես որ օգտիս, և այնպիսի կերպով օգտիս որ կարենաս վայելել ալ : Այկու պատճառի համար մեծ գործքերու մէջ մի մանար, նախ որպէս զի մեծ կորուսաներու համար վիշտ քաշելու հարկ չընենաս . և երկրորդ որպէս զի հոգ չընես թէ արդեօք քարերաներութ նեղութեանց ինչպէս դարման հասցընես :

Օ գոյշ կեցիր ուրիշն թշուաւութիւնը ծաղը ընելէն, վասն զի չենք զիտեր թէ այսօր այսպէս՝ արդեօք վաղը մեզ ալ ինչ կրնայ պատահիլ : Ուն որ աղէկ մարդու բարիք ընես՝ մէկ ան պատմելի ուրախութիւն մը կը զգաս սրտիդ մէջ, և ընդհակառակն թէ որ նայիս որ գոհ ընես չար անզգամներն, կը պատահիք քեզի ալ ան զիագուածն, ինչ որ սովոր է պատահիլ անոր որ շանն պատառ մը հաց կը նետէ . վասն զի չներն աւելի անոնց վրայ կը հաջեն ուսկից որ բան կ'ընդունինքան ուրիշներուն : Այս պէս ալ չարերն աւելի պատրաստ են չարիք հասցընելու անոնց ուստի որ բարիք տեսեր են, քան անոնց որոնցմէ որ չարիք ընդուներ են :

Ատելի ըլլան քեզի ոչ միայն շողոքորթ մարդիկ, այլ նաև չարախոսներն ալ,

վասն զի երկուքն ալ նոյնպէս կը մոլոր ցընեն, ով որ իրենց ըսածներուն մէյմը իրաւունք տալ սկսի : Ուն որ բարեկամներուդ մէջէն ամենալաւն զայն կը համարիս որ պակսութիւն ըրած ժամանակդ կու գայ կը գովէ կը շողոքորթէ զքեզ, գիտցած ըլլաս որ ուրիշ մարդ չես գտնար որ զքեզ ուղղելու համար գայ քեզի հետ թշնամանայ : Ան կը ընդունելու և բարեկելու ժամանակդ նայէ որ միշտ քաղցրութիւնը ու քաղաքավարութեամբ կ'ըլլայ երբոր մէկը ուրիշի խնդիրք ընդունելու ժամանակ խիստ ձայն և բարեկութիւն չգործածէ, երբոր դաշն դնելու ատեն անաշառ ըլլայ, ոչ յամառ և ոչ ընդդիմաբան :

Ինքոյահան պատմութիւն .

Ի ՏԵՌՈՔ մարդուն մէկը ձամբան երթալու ժամանակ, գիմացը գաճաճ մը կ'ելլէ որ բարկանալով՝ անդին կորսուէ, կը պուայ : — « Ի՞նչ յանդգնութիւն է ատ ըրածդ, կ'ըսէ մարդը, դուն ով ես որ այդպիսի գաճաճութեամբդ, որ երկու մատիս մէջ կընամ՝ զքեզ սխմել ու խղղել, իմ ձամբաս կ'արգելուս : — Չայնդ քաշէ, կ'ըսէ գաճաճը, ես Վահն եմ, ամէնքը պէտք է որ կանչածիս պէս իմ ետեկս գան, դուն ալ իմ իշխանութեանս տակն ես ու ինձի հնազանդ պիտի ըլլաս . . . Այս խօսքիս վրայ մարդը կը սրդողի, վրան կը յարձակի, աղէկ մը ծեծ քաշելէն վերծը, կը վիրաւորէ ու կը ձգէ կը փախչի : Վահը սաստիկ վիրաւորուած մէկէն գետին կ'իյնայ ու ինքիրեն կը սկսի մըտածել . . . Այս ինչ բան եկաւ զիմուս, թէ որ ես այսպէս աշխարհքիս մէկ ծայրը մնամ ու իմ պաշտօնս չի կատարեմ՝ ամենեին մարդ պիտի չի մեռնի ու այնչափ պիտի շատնան, որ բոլոր երկիրս իրենց պիտի չըաւել, ասկէ ալ գէշ՝ բազմանալով մարդկանց մէջ չա-